ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/27, 12.02.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆայնենշալ ըդվայզ գրուպ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել «ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը.
2. Պարտավորեցնել «ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ աուդիտորական ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ Հրավերը համապատասխանացնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Ֆայնենշալ բրկայգ գրուպ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թոթովենցի փ. 2/1, 41
հեռ: (099) 54 33 99
էլ.փոստ՝ margaryanani15@gmail.com

Պատվիրատու՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար՝ <<**Աուդիտորական ծառայությունների**>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- ***<u>Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.</u>***

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է <<ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2>> ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Սույն ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված **2020թ. փետրվարի 12-ը, ժամը 12:00-ն:**

Ընթացակարգի առարկան է հանդիսանում «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար՝ «Աուդիտորական ծառայության» ձեռքբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝

Չափաբաժնի հերթական համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	Աուդիտորական ծառայություն

Մ-5113-20
12.02.20

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել է աուդիտորական ծառայությունների հետևյալ տեխնիկական բնութագիր՝

2019թ. ՖՀՄՄ-ների համապատասխան պատրաստված տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

-Աուդիտի պետք է ենթարկվի ՖՀՄՄ-ներին համապատասխան պատրաստված Պատվիրատուի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ առ 31-ը դեկտեմբերի 2019թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվություն և այլ բացատրական ծանոթագրություններ:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը կազմում է 363 անձ:

Հիմնադրամն ունի 2 ֆակուլտետ, 25 մասնագիտություն, 2575 ուսանող:

- Պատվիրատուի եկամուտները 2019թ համար կկազմի մոտ մեկ միլիարդ մեկ հարյուր միլիոն 22 դրամ:

Հիմնական միջոցների միավորների քանակը՝

- *Շենքեր, շինություններ՝ 4 միավոր*
- *Արտադրական տնտեսական գույք՝ 3972 միավոր*
- *Տրանսպորտային միջոց՝ 1 միավոր*
- *Թանգարանային գույք՝ 1 միավոր*
- *Գրադարանային գույք՝ 80000 միավոր*

Պաշարների միավորների քանակը՝ 1182 միավոր:

Գործընկերների քանակը՝ 352:

Բանկային հաշիվների քանակը՝ 3:

Աշխատակիցների անալիտիկ հաշվառումը վարվում է ՀՇ ծրագրով, որում ամփոփվում են ուսանողների, հիմնական միջոցների, պաշարների և աշխատակիցների անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալները՝ ակտիվների, պատավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ:

Մասնակիցը պետք է ապահովի՝

1. Մասնագիտական հատկանիշներ (աշխատանքային փորձ)

- *Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ - 10 տարի*
- *Աշխատանքային փորձը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում -5 տարի*
- *Աշխատանքային փորձը ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում - 5 տարի*

2. Աշխատանքային ռեսուրսներ (առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմ)

- *Անձնակազմի ընդհանուր փորձառությունը-10 տարի*
- *Անձնակազմի փորձառությունը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում-5 տարի*
- *Անձնակազմի որակավորումը ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում-5 տարի*

3. Ծառայությունների մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)

- *Աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը*
- *Մեթոդաբանություն*

- Անցկացված աուդիտի արդյունքում աուդիտ իրականացնող անձը պետք է արտահայտի կարծիք առ 31-ը դեկտեմբերի 2019թ., Եկամուտների և ծախսերի տարեկան

նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաստատ նպատակի հիմքերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

- Աուդիտը պետք է իրականացվի աուդիտի միջազգային ստանդարտներով:

Ծառայությունները կատարելուց հետո աուդիտ իրականացնող անձը պետք է ներկայացնի աուդիտորական եզրակացություն, համակ դեկավարությանը:

Այլ պայմաններ:

Մասնակիցը պետք է ունենա Աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա:

- ***Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով*** մրցակցային, թափանցիկ, ***համաչափ***, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.***

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ***ամբողջությամբ և հստակ նկարագրեն*** ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանություններ: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար ***չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.***

3) ***պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված*** և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և ***այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:***

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք ***պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.***

Գտնում ենք, որ <<ՀՖԿՍՊԻ-ԳՀՄՁԲ-20/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտում, մասնավորապես.

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ աուդիտորական ծառայությունների տեխնիկական բնութագրի **աշխատանքային ռեսուրսներ** (առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմ) բաժնում պահանջվել է՝

Անձնակազմի ընդհանուր փորձառությունը-10 տարի

Անձնակազմի փորձառությունը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում-5 տարի

Անձնակազմի որակավորումը ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում-5 տարի:

Այսպես.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ բննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի ծառայությունների մատուցման համար պահանջվում է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա և տվյալ պարագայում Ընթացակարգի հրավերի այն պահանջը, որ ***անձնակազմի ընդհանուր փորձառությունը-10 տարի,*** գտնում ենք, որ օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ կարծես թե «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը աուդիտորական ծառայությունների ձեռքբերում պետական գնման մրցույթով չի հայտարարել, իսկ այս անգամ առաջնորդվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ որոշում է կայացրել աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել գնանշման հարցման ընթացակարգ, սակայն վերջինս մեր կարծիքով սահմանել է խտրական պահանջներ:

Նույնտիպ խնդրի առաջ ենք կանգնում նաև, երբ ուսումնասիրում ենք «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ աուդիտորական ծառայությունների տեխնիկական բնութագրի **մասնագիտական հատկանիշները** (աշխատանքային փորձ) ուսումնասիրելիս, ըստ որի պահանջվում է՝

Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ - 10 տարի

Աշխատանքային փորձը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում -5 տարի

Աշխատանքային փորձը ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում - 5 տարի:

Այսպես.

Անընդունելի է Ընթացակարգի հրավերով ամրագրված հետևյալ արտահայտությունը **<<Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ - 10 տարի>> և <<Աշխատանքային փորձը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում -5 տարի>>**, քանզի եթե մասնագետը անցնելով աուդիտի համապատասխան միջազգային որակավորման բոլոր փուլերը և արդյունքում արդեն իսկ ստացել է աուդիտի միջազգային որակավորում՝ ուրեմն իրավունք և ընդունակություն ունի իրականացնելու իր մասնագիտական գիտելիքները աուդիտորական ծառայության յուրաքանչյուր ոլորտում: Իսկ այս պարագայում նորից օբյեկտիվորեն չհիմնավորված պահանջ է դրվել, որ մասնակիցը պետք ունենա աշխատանքային փորձ 10 տարի, դեռ ավելին՝ պետք ունենա կոնկրետ ԲՈՒՀ-ական համակարգում 5 տարվա փորձ:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ Հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ աուդիտորական ծառայությունների տեխնիկական բնութագիր վերտառությամբ բաժինը՝ ***պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին***:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է ***գնման առարկայի բնութագրերը,*** նախաառարկավորման հայտարարության կամ ***հրավերի պահանջները***, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ բննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգով հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի <<բ>> պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ բննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտավորեցնել «ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

կամ

2. Պարտավորեցնել «ՀՖԿՍՊԻ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» բաժնի՝ աուդիտորական ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ Հրավերը համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

«Ֆայնենշալ ըդվայզ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ **Ա. Մարգարյան**

12.02.2020թ.